

Պետության կողմից <<Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին

ք. Երևան

08.01. 2018թ.

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Ս. Ամիրխանյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն>> ՊՈԱԿ-ը, ի դեմս՝ գլխավոր տնօրենի պաշտոնակատար՝ Ա.Շահնազարյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին կողմեր), հիմք ընդունելով 2017 թվականի դեկտեմբերի 28-ի <<<< 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին >> թիվ 1717-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), հեռահաղորդակցության և կապի կանոնակարգման ծառայությունների ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

- 1.1 Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել օրենքով նախատեսված՝ 290 321 800 (երկու հարյուր իննսուներեք հարյուր քսանմեկ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել օրենքով և սույն պայմանագրով սահմանված կարգով:
- 1.2 Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

- 2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝
 - 2.1.1 ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.
 - 2.1.2 օրենքով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.
 - 2.1.3 առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու, բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում), գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

- 2.1.4 սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:
- 2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝
 - 2.2.1 պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:
- 2.3 Պետական մարմինը պարտավոր է՝
 - 2.3.1 ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.
 - 2.3.2 կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.
 - 2.3.3 իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.
 - 2.3.4 գործունեության արդյունքների վերաբերյալ ներկայացված եռամսյակային և տարեկան հաշվետվությունները քննարկել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը: Նշված ընթացքում չծանուցելու դեպքում՝ հաշվետվությունը համարվում է ընդունված:
- 2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝
 - 2.4.1 իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.
 - 2.4.2 պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով.
 - 2.4.3 կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.
 - 2.4.4 սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին եռամսյա հաշվետվություն՝ մինչև եռամսյակի վերջին ամսվա հաջորդող ամսվա 25-ը, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ տարեկան հաշվետվություն՝ ավարտից հետո 30 օրվա ընթացքում.
 - 2.4.6 սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովելու ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.
 - 2.4.7 պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է

անվճար, պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում, վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

- 2.4.8 ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգ

- 3.1 Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:
- 3.2 Մոնիթորինգն իրականացնում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:
- 3.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:
- 3.4 Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:
- 3.5 Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ ու բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

- 4.1 Կազմակերպության միջոցառումներն իրականացվում են հաշվետու տարվա ընթացքում, իսկ վճարումներն իրականացվում են ամսեկան՝ կանխավճարային ձևով, յուրաքանչյուր ամսվա առաջին տասն աշխատանքային օրվա ընթացքում:

5. Կողմերի պատասխանատվությունը

- 5.1 Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 0.5 տոկոսի չափով, իսկ տույժերը՝ 0.05 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

- 6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:


7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1 Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

- 8.1 Միջոցառումների ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:
8.2 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումները իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:
8.3 Պայմանագիրը կնքվում է 2 /երկու/ օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:
8.4 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:


9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները


Աշխատանքային ընկերակալ՝ Ա. Ամիրխանյան
«Արմենիա» ընկերության և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարություն
Երևան, Կենտրոնական փողոցի 3/3

«ՖՆԱ» գործառնական վարչություն

h/h 900011012235

ՀՎՀՀ 02565518


Գլխավոր տնօրենի պաշտոնակատար՝
Ա. Շահնաբյան
«Երևանապետական կոնստրուկտիվ»
հանրապետական կոնստրուկտիվ

ք. Երևան Թբիլիսյան խճ.29

Կոնվերսբանկ

h/h 1930000495700100

ՀՎՀՀ 01508596

2018թ. Ռ-ադիոէթերի մոնիթորինգի և չափումների գծով իրականացվելիք աշխատանքների քանակային և ֆինանսական ցուցանիշները


NN	Չափումներ ըստ մարզերի	Հունվար		Փետրվար		Մարտ		Ապրիլ		Մայիս		Հունիս	
		Քա նակ	Գումար	Քա նակ	Գումար	Քա նակ	Գումար	Քա նակ	Գումար	Քա նակ	Գումար	Քա նակ	Գումար
1	ռադիոէթերի մոնիթորինգի և ազդանշանների տեխնիկական պարամետրերի չափումների անցկացումը	7 541		7 597		8 374		8 253		8 428		8 341	
2	ռադիոէթերում ալիքային միջոցների և բարձր հաճախության սարքավորումների տեղորոշումը	9	71 743	9	73 390	10	98 898	10	89 190	11	92 202	11	98 065
3	էլեկտրամագնիսական իրադիոակտիվ չափումների և հաշվարկների իրականացումը	40	336 470	40	352 940	45	432 725	45	388 405	45	382 235	50	485 670
4	ռադիոէթերում ալիքային միջոցների և բարձր հաճախության սարքավորումների տեխնիկական զննումների իրականացումը	7	34 974	7	24 432	7	46 143	9	49 433	9	48 903	9	53 966
5	ռադիոէթերում ալիքային միջոցների և բարձր հաճախության սարքավորումների փորձաքննության անցկացումը	0		0		0		0		1	4 072	1	4 072
6	ռադիոէթերում ալիքային միջոցների և բարձր հաճախության սարքավորումների տեղադրման վայրերում շինարարական աշխատանքների տեխնիկական նորմերին համապատասխանության ընդունումը	0		0		0		0		0		0	
7	էթերի խանգարման աղբյուրների հայտնաբերման և վերացման աշխատանքների իրականացումը	10	76 560	10	79 854	10	98 898	10	89 190	10	88 130	10	98 256
8	հատկացված հաճախականությունների պլանային չափումների իրականացումը	1 399	12 148 427	2 043	20 759 112	2 226	23 694 313	2 299	21 517 142	2 276	20 917 085	2 380	25 891 084
	Ընդամենը		12 668 174		21 289 728		24 370 977		22 133 360		21 532 627		26 631 113


2018թ. Ռ-ադիոէթերի մոնիտորինգի և չափումների գծով իրականացվելիք աշխատանքների քանակական և ֆինանսական ցուցանիշները

NN	Չափումներ բառ մարզերի	Հուլիս		Օգոստոս		Սեպտեմբեր		Հոկտեմբեր		Նոյեմբեր		Դեկտեմբեր		Ընդամենը	
		Քանակ	Գումար	Քանակ	Գումար	Քանակ	Գումար	Քանակ	Գումար	Քանակ	Գումար	Քանակ	Գումար	Քանակ	Գումար
1	ռադիոէթերի մոնիթորինգի և ազդանշանների տեխնիկական պարամետրերի չափումների անցկացումը	8 292		8 125		7 294		8 077		7 859		7 055		95 236	0
2	ռադիոէթերումային միջոցների և բարձր հաճախության սարքավորումների տեղորոշումը	11	105 710	11	93 300	10	84 005	10	94 044	9	89 101	9	59 548	120	1 049 196
3	էլեկտրամագնիսական իրավիճակների չափումների և հաշվարկների իրականացումը	50	539 380	50	440 530	50	385 790	45	397 020	40	383 740	40	271 770	540	4 796 675
4	ռադիոէթերումային միջոցների և բարձր հաճախության սարքավորումների տեխնիկական գնումների իրականացումը	9	59 337	9	49 452	9	43 978	9	51 860	9	54 287	7	28 504	100	545 269
5	ռադիոէթերումային միջոցների և բարձր հաճախության սարքավորումների փորձաքննության անցկացումը	1	4 072	1	4 072	1	4 072	0		0		0		5	20 360
6	ռադիոէթերումային միջոցների և բարձր հաճախության սարքավորումների տեղադրման վայրերում շինարարական աշխատանքների՝ տեխնիկական մոնիթորինգի համապատասխանության թնդումումը	0		0		0		0		0		0		0	0
7	էթերի խանգարման աղբյուրների հայտնաբերման և վերացման աշխատանքների իրականացումը	10	108 998	10	89 228	10	78 280	10	94 044	10	98 898	10	63 620	120	1 063 956
8	հատկացված հաճախականությունների պլանային չափումների իրականացումը	2 135	26 198 293	1 968	18 065 805	1 334	11 908 507	1 927	18 445 270	1 911	20 171 567	913	7 121 320	22 811	226 837 925
	Ընդամենը		27 015 790		18 742 387		12 504 632		19 082 238		20 797 593		7 544 762		234 313 381

2018թ. Ռադիոկապի կարգավորման և կանոնակարգման գծով իրականացվելիք աշխատանքների քանակական և ֆինանսական ցուցանիշները

Քանակական	Մատուցվող ծառայության անվանումը Շտախազորակցության և կապի կանոնակարգման ծառայությունները	I միավոր աշխատանքի արժեքը	Ֆինանսական և քանակական ցուցանիշների կանխատեսում 2018												Ընդամենը քանակ	Ընդամենը գումար		
			I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
	Հայաստանի Հանրապետության հաճախականությունների թաշխումների ադյուտակի կազմումը և այն իրավասու մարմնին ներկայացումը	524 284								1						1	2	1 048 568
	Բոլոր ծառայությունների հաճախականությունների և կապուղիների միջազգային կոորդինացման և գրանցման հաշվարկներ, միջազգային շտեմարանում ներկայացնելու համար անհրաժեշտ նյութերի մշակումը և պլանավորումը	51 514	60	60	70	70	70	70	70	70	70	70	70	60	60	800	41 211 195	
	Էլեկտրամագնիսական համատեղելիության, կոորդինացման համար նախատեսված, հեռարձակման գոտիների, խանգարումներից զերծ մնալու ծրագրային հաշվարկներ, պլանավորում և համեմատականների անցկացում	54 033	16	16	17	17	17	17	17	17	17	17	17	16	16	200	10 806 600	
	Հայաստանի Հանրապետության և միջազգային ստանդարտներին, ոլորտը կարգավորող իրավական և տեխնիկական նորմատիվ ակտերին համապատասխանության վերաբերյալ իրավասու մարմնին նյութերի տրամադրում	98 044	1	2	2	2	3	3	3	3	3	3	3	3	2	30	2 941 320	
Ֆինանսական ՀՀ դրամով	Ընդամենը															1 032	56 007 683	


 Ա. Անդրեասյան
 ՀՀ տրանսպորտի, կապի և
 տեղեկատվության տեխնոլոգիաների
 նախարարություն
 ք. Երևան, Ա. Մանգույան 3/3
 Ֆ. Ա. գործատանային վարչություն
 Խ/Գ 900001012235
 ՀՀ 02565518


 Ա. Շահնազարյան
 Հանրապետության հանրապետական կենտրոն
 ՊՈԱԿ
 ք. Երևան Թբիլիսյան խճ.29
 Կոնվերսանկ
 Խ/Գ 1930000495700100
 ՀՀ 01508596